ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հունիսի 13-ից 17-ը

Ռումինիա (ք. Բուխարեստ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Լիանա Մնոյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության և օպերատիվ հետախուզության թիվ 21 (վերլուծությունների) բաժնի գլխավոր հարկային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռումինիա, ք. Բուխարեստ, 2023 թ. հունիսի 13-ից 17-ը

3. Հրավիրող կողմը՝

Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպություն՝ ինտերպոլ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Միջոցառմանը մասնակցության հիմնական նպատակն էր մասնակցել Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության կողմից կազմակերպվող Geiger աշխատանքային խմբի հերթական հանդիպմանը: Վերջինս թույլ է տալիս ՀՀ ՊԵԿ իրավասու ստորաբաժանման ներկայացուցիչներին ծանոթանալ ոլորտում ընթացքող միջազգային զարգացումներին, փոխանակվել փորձով և գիտելիքներով:

5. Քննարկված թեմաները՝

Geiger ծրագրի շրջանակներում մասնակից երկրների՝ Հայաստանի Հանրապետության, Բուլղարիայի Հանրապետության, Վրաստանի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության, Ռումինիայի, Ուկրաինայի, Թուրքիայի և Ադրբեջանի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են տվյալ երկրում քիմիական, կենսաբանական, միջուկային և ռադիոակտիվ նյութերի անվտանգության, պահպանման, ապօրինի շրջանառության դեպքերի կանխման, հայտնաբերման վերաբերյալ տեղեկատվությունները և քննարկվել են առկա խնդիրների լուծման տարբերակները:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Geiger ծրագրի շրջանակներում նախաձեռնվել է Հայաստանի Հանրապետության պատվիրակության և Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության

ներկայացուցիչների երկկողմ հանդիպում՝ համագործակցության ընթացքի և Geiger ծրագրի շրջանակներում հետագա հանդիպումների անցկացման վայրի վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Միջոցառման ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել, գրավոր որոշումներ չեն ընդունվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Geiger աշխատանքային խմբի հանդիպումներին մասնակցությունը եզակի հնարավորություն է տալիս ՀՀ ՊԵԿ իրավասու ստորաբաժանմանը տեղեկանալ քիմիական, կենսաբանական, միջուկային և ռադիոակտիվ նյութերի անվտանգության, պահպանման, ապօրինի շրջանառության կանխման նպատակով իրականացվող միջազգային զարգացումներին, ծանոթանալու առկա խնդիրներին և փոխանակել վերջիններիս լուծման ուղղված փորձերը գործընկերների հետ: Այն նպաստում է այլ երկրների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ անմիջական կապի հաստատմանը: Այս համատեքստում կարևոր է Geiger ծրագրին ՀՀ ՊԵԿ իրավասու ստորաբաժանման կանոնավոր մասնակցությունը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

ԼԻԱՆԱ ՄՆՈՅԱՆ

20.06.2023թ.